Այս խօսքերէս վերջը Քաւլյերոսը երթալ բարով ըսաւ Պրահմանին, որ կոստանդնուպոլսոյ ճամբան բռնեց, միայն ունենալով հոնկէց ալ նաւել՝ Եւրոպիոյ ամենէն քաղաքականացեալ երկիրները տեսնալու համար։ Երբ մեծաւ յաջողութեամբ այս քաղաքս հասաւ, օսմանեան պետութիւնը նաւ մը գնելու հետ էր, որ Միջերկրականին մէջ ապահով պահպանութեանը համար պիտի երթեւեկէր. գիտուն էֆէնտի մըն ալ պիտի զրկէր յԱլճերի բարբարոսաց հետ եղած խնդիրները կարգի դնելու համար, որք դեռ լմնցած չէին։ Նաւա-Մունի, որ նոր երկիրներ քալել շատ կը փափաքէր՝ շատ ալ ուրախացաւ անանկ ժողովուրդ մը երթալու տեսնալու, որ կրած թշուառութենէն մեծ խրատ առեր էր, և անոնց վրայ պիտի մտածէր։

Կը շարունակուի։

ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆՔ

ՔՍԱՎԵՐԻՈՍ ՄԷՐԳԱՏԱՆԴԷ։ — Օրագիրք այս հռչակաւոր շարագրող երաժշտին մահը կը ծանուցանեն։ Այս մեծանուն մարդուս մահուամբ իտալիոյ երաժշտական արհեստը մեծ կորուստ մը կ՚ընէ։ Մէրգատանդէ այն մեծ հանճարներէն մէկն էր, որ մեր դարուն առջի կիսուն շքեղապէս փայլեցան. յորոց էին Ռոսինի, Պէլլինի և Տոնիծէդդի։

Ինքը Ապուլիոյ Ալդամուռա պզտի քաղաքը ծնած էր 1798ին. և իր առջին երաժշտական կրթութիւնները՝ Նաբոլիի Ս. Սեբաստիանոս երաժշտական վարժարանը ըրած էր, որուն առջնորդն էր այն ատեն հռչակաւորն Ծինկարէլլի։

Կանուխկէկ ինքզինքը թէատրոնական երաժշտութեան տուաւ, և 1819ին Ս. Կարոլոս թէատրոնը Հերքիւլեսի դիւցակարգութիւն առջին թատերգութիւնը հանդիսացուց. որմէն անմիջապէս ետքը և նոյն տարին նաև Բռնութիւն և Յարակայութիւն մականունեալ կատակերգական թատերգութիւնը շարագրեց, և երկուքն ալ յաջող ելք մ՚ունեցան, ամենուն հաճելի անցնելով։ Երկրորդ տարւոյն արդիւնք եղան Անակրէոն և Սամոս, որ առջիններէն աւելի անուն հանեցին և մեծ ընդունելութիւն գտան, մինչև իտալիոյ բոլոր թէատրոններուն տեսարանները բացուեցան նոր երաժիշտ շարագրողին առջին։

Այս երաժշտին գլխաւոր գործերն են Էլիզա և Կլոդիոս կատակերգական թատերգութիւնը, Հեղինէ Ֆէլդրեցի, Վէստալը, Երկու մեծազգի նախանձորդք, զոր Բարիզու թէատրոնին համար գրեց, և մեծ զարմանք պատճառեց ոճին վսեմութեամբը և ուժովը։ Ասկէ զատ դեռ ևս ուրիշ շատ հռչակաւոր թատերգութիւններ ունի շինած։

Այս վերջին տարիներս Մէրգատանդէն Նաբոլիի երաժշտութեան վարժարանին տեսուչն էր. և թէպէտ աչաց տեսութիւնը կորուսած էր, և պատկառելի էր նաև հասակաւ, ՚ի վերայ այսր ամենայնի ամենևին չդադարեցաւ իր ջերմ երևակայութիւնը նորանոր բաներ գրելու գործածելէ. և այս բանիս ապացոյցը Վիրգինիան է, որ երկու տարի առաջ այնչափ նախանձելի ընդունելութիւն գտաւ։

Մոն Սընիին անցքը։ — Դեռ ևս Բազմավիպիս 1871ին յունուարի թերթերուն տպագրութիւնը չլմնցած, մեծագործ ձեռնարկի մը յաջողութեան լուրը առինք, որ դարուս շքեղ պարծանքներէն մէկը պիտոր մնայ առ ապայս։

Մոն-Սընիին գետնափոր անցքը գլուխ տարուելով բացուեցաւ։ Մինչև անցած դեկտեմբերի 22էն հեռագիրը ծանուցեր էր թէ՝ այլ ևս հինգ մեդր միջոց կը մնար ծակելու, և կը յուսացընէր թէ ծննդեան օրով այն միջոցն ալ պիտոր ծակուէր լմննար։ Եւ յիրաւի, յոյսը սուտ չելաւ. վասն զի դեկտեմբերի 25ին

հեռագիրը ուրախութեամբ այն միջոցին ծակուիլն ալ կ'իմացընէր, որով երկու կողմի գործաւորքն ալ կեցցէ՛ Իտալիա աղաղակով մէկզմէկ կ'ողջունէին։

Այս գործիս յաջողութիւնը գիտութեան ուրիշ յաղթանակ մըն է. և որ զարմանալին է, անանկ ժամանակ իր լրումը կ'առնու, որ քիչ մը հեռու՝ Մոն Սընիին միւս կողմը, կոչտ բռնութեան մը ուժն ալ իր զարհուրելի յաղթանակը կ'ընէ։

Անանկ մեծագործ ձեռնարկի մը մէջ Գաղղիան ալ իր պարծանաց մասն ունի. բայց հիմայ իր թշուառութիւնները այնչափ են՝ որ տարակոյս չկայ որ և ոչ ուրախութիւն մը զգալուն նշանը պիտոր տայ։

Այսպէս յեղյեղուկ է մարդկային փառքը։

Կղզիի մը աներևութանալը։ — Խաղաղական Ովկիանոսին մէջ վերջի ատենները արտաքոյ կարգի դէպք մը հանդիպեր է։ Բլոք նաւապետը Իքիքէն Լոնտրա դառնալու ճամբայ ելլալով, կը պատմէ թէ Եպրիտեան կղզիներուն քովէն անցած ժամանակը դիտեր է՝ որ Արշալոյս մականուանեալ կղզին՝ բոլորովին անյայտ եղած է։ Անոր և ոչ պզտի նշան մը կայ ովկիանոսին այն տեղը՝ ուր առաջ կը գտնուէր։

Արշալոյս կղզին նոր Եպրիտեան կղզիներուն մէջէն ամենէն ընդարձակն և ամենէն արդաւանդն էր։ Գրեթէ 36 մղոն երկայնութիւն ունէր և 5 մղոն լայնութիւն. ծանօթ էր միշտ որ Դաննա և Ամպրիմ կղզիները հրաբղխային էին. սակայն միւսներուն համար հասարակաց կարծիքն էր թէ աղատ են ամենեին ինչ և իցէ հրաբղխային աղդեցութենէ։ Թէ ինչպէս և երբ Արշալոյս կղզին հանդերձ իր բնակիչներովը խաղաղականին ջրերուն տակը ընկղմեր են, մինչև հիմա ամենեին տեղեկութիւն մը չունինք. սակայն անտարակոյս Բլոք նաւապետն Անգղիա հասնելով, կարենայ պիտի այս դժբաղդ պարագային վրայօք աւելի տեղեկութիւններ տալ։

Նարնջի գինի։ — Սպանիացի լրագիր մը կը պատմէ թէ՝ Սպանիոյ հարաւային կողմը անանկ առատ է աղէկ տեսակ նարնջի բերքը, որ կարելի չըլլալով պատշաճ գնով մը օտար տեղեր ծախու ղրկել, շատ մարդիկ զանոնք գինի կը շինեն, որ պանչելի տեսակ մը կ'ըլլայ, և համը շատ կը նմանի Մատերայի գինւոյն։ Մամլոյ միջոցաւ ճզմելով՝ հոյզը կը հանեն, ապա խաղողոյ հոյզին նման թող կու տան որ խմորի, և յետոյ տակառներու մէջ կ'առնեն, առանց ալքոոլի կամ ջրի հետ խառնելու։

Մ. ԱՏՏԻՂԻՈՍ ՀՌԵԳՈՒՂՈՍ

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

Յայտարարութիւն.

Փառաւորեալն անուանց՝ որովք Հռովմէականն երբեմն պանծացաւ պետութիւն, հնութեանն առ հասարակ զուգաձայնութեամբ նախամեծարն է միշտ վիճակեալ գահու 'ի պարս անդ՝ անուն Ատտիղիոսի Հռեգուղոսի։ Այն՝ որ ոչ զարիւն իւր միայն յոգուտ հայրենեացն ծախեաց և զքրտունս և զամենայն ջան, այլ և զիւրն չարադիպութիւն 'ի շահ նմին գիտաց վերաբերել։

Լի աւուրքք և արդեամբք վարեցաւ անբաղդութեամբ գերի 'ի Կարթեդոն։ Այս քաղաք իբրև զարհուրեալ 'ի բաղդէ նախանձաւորին Հռովմայ հարկեցաւ խօսել հրեշտա-